



**Փոքր և միջին բիզնեսի հիմնադրամ
(ՓՄԲՀ)**

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԲԻԶՆԵՍԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԽԹԱՆՈՂ
ՀԱՐԿԱՅԻՆ ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

1. Ներածություն
2. Փոքր և միջին ձեռնարկատիրության արդի վիճակը և դերը ՀՀ տնտեսության մեջ
3. Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումը խոչընդոտող գործոնները և ՓՄԶ ներքին ռեսուրսները կյանքի կոչելու եղանակները
4. Առաջարկություններ օրենսդրության մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման կարևորության մասին խոսվում է դեռևս 90-ական թվականներից: Պետական մակարդակով դա դրսևորվում է պարբերաբար ընդունվող օրենքներով և ծրագրերով, որոնք կարևորում են մասնավոր ձեռնարկատիրության դերը տնտեսական բարեփոխումների իրականացման, աղքատության կրճատման, միջին խավի ձևավորման և հասարակության սոցիալական պրոբլեմների լուծման մեջ: Այսպես, 2000թ. դեկտեմբերին ուժի մեջ է մտել «Փոքր և Միջին Ձեռնարկատիրության Պետական Աջակցության Մասին» ՀՀ Օրենքը, որը հիմք պիտի ծառայի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման համար հատուկ բարենպաստ պայմանների ստեղծմանը: 2002թ-ից սկսել է գործել փոքր և միջին ձեռնարկատիրության պետական օժանդակության ծրագիրը, որի շրջանակներում ստեղծվել է Փոքր և Միջին Ձեռնարկատիրության Զարգացման Ազգային Կենտրոնը, որի առաքելությունն է նպաստել փոքր և միջին բիզնեսի զարգացումը խթանող պետական քաղաքականության ձևավորմանն ու օժանդակել դրա իրականացումը: Սակայն Հայաստանում այսօր փոքր և միջին բիզնեսի վիճակը հեռու է շուկայական տնտեսության համար բավարար մակարդակից:

Մեր երկրում փոքր բիզնեսի կայացման ճանապարհին դեռևս առկա են բազմաթիվ խոչընդոտներ, որոնցից ամենակարևորներն են անկայուն և հակասական օրենսդրական քաղաքականությունը, հարկման անկատար համակարգը, ֆինանսական ռեսուրսների ձեռք բերման հետ կապված դժվարությունները: Ներկայումս գործող փոքր բիզնեսի աջակցության պետական ծրագրերը չեն խթանում դրա զարգացումը: Դժվար չէ նկատել այդ ոլորտում պետության կողմից քարոզվող գաղափարախոսության և գործնականում իրականացվող քաղաքականության միջև անհամապատասխանությունը: Այսօր հարկերը «խլում են» փոքր ձեռնարկությունների շահույթի նույնիսկ այն մասը, որն անհրաժեշտ է աշխատանքի դիմաց վճարումների համար, միջոց չթողնելով ոչ միայն զարգացման, այլ նույնիսկ պարզ վերարտադրության համար: Արդյունքում՝ կամ ստվերայնություն, կամ սնանկացում:


Ստացվում է, որ «փոքր» ձեռներեցին լավագույն դեպքում թույլ են տալիս գոյատևել մի նեղ խցում, որպեսզի նա հանկարծ չմեծանա ու դառնա «միջին», կամ էլ, աստված չանի, «մեծ»:

Այնինչ, փոքր բիզնեսի հարկման ռազմավարությունը առաջին հերթին պետք է ուղղված լինի եկամուտների օրինականացմանը, այլ ոչ միայն ֆիսկալ վերահսկման դեր կատարի: Անհրաժեշտ է մշակել և իրակ`անացնել ՓՄՁ-ների համար հարկային բարեփոխումների այնպիսի համապարփակ ծրագիր, որը հնարավորություն կտա պետական շահերը ներդաշնակել փոքր և միջին բիզնեսի շահերի հետ և նպատակաուղղված կլինի մեր երկրում փոքր և միջին ձեռնարկատիրության աճի ու զարգացման համար բարենպաստ պայմանների ձևավորմանը: Նման մոտեցումը ենթադրում է փոքր և միջին բիզնեսի համար ստեղծել պայմաններ, որոնք թույլ կտան նախ ավելացնել օրինական ձևով գործողների թիվը, ապա ապահովել դրանց կայացումն ու կայունացումը` ապագայում «խոշոր» հարկատու ունենալու նպատակով: Արդյունքում պետական բյուջեում փոքր բիզնեսի բաժնեմասի ավելացումը կվկայի խելամիտ ու հեռանկարային պետական քաղաքականության մասին: Այսօր փոքր և միջին ձեռներեցությունը մեզանում աշխատունակ բնակչության աղքատության կրճատման կարևորագույն միջոցներից է նաև: Խթանելով քաղաքացիների ձեռնարկատիրական նախաձեռնությունը մենք կպաշտպանենք ժողովրդի ձգտումը դեպի բարեկեցիկ կյանք, ինքնապահովում և վերջին հաշվով կձևավորենք մեր ապագան:


2. ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԶԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԴԵՐԸ ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՁ

«ՀՀ Սոցիալ-Տնտեսական Վիճակը» տեղեկատվական զեկույցի համաձայն համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) կառուցվածքն ըստ տնտեսության հիմնական ճյուղերի հետևյալն է.

2002 թ. ՀՆԱ 1357280.3 մլն դրամ
այդ թվում`




ՓՄՁ-ների համեմատական թվի բաշխվածությունը ըստ տնտեսության ճյուղերի տալիս է հետևյալ պատկերը.



ԸՆԴԱՄԵՆԸ ՓՄՁ՝

10925 (ՓՄՁ-71.3%)

Իսկ ՓՄՁ-ների արտադրանքի համեմատական ծավալը ըստ տնտեսության ճյուղերի հետևյալն է.



Ըստ բերված տվյալների արդյունաբերական ձեռնարկությունների ընդհանուր քանակում գերակշռում են գերփոքր, փոքր և միջին ձեռնարկությունները: Դրանց տեսակարար կշիռը կազմում է 89.5%, իսկ թողարկած արդյունաբերական արտադրանքը կազմում է ընդհանուր ծավալի միայն 31.1%:

Հանրային սննդի օբյեկտների 98.9% կազմող ՓՄՁ-ները, ապահովել են ընդհանուր ապրանքաշրջանառության 81.1%:

Խանութների ընդհանուր քանակի 99.2% կազմող ՓՄՁ-ների ապրանքաշրջանառությունը կազմել է ընդհանուր ծավալի միայն 51.2%:

Սպառողական ապրանքների շուկաներում վարձակալական հիմունքներով առևտուր իրականացնող իրավաբանական անձանց և անհատ ձեռներեցների թվաքանակը կազմում է ընդհանուրի 93.5%, մինչ դեռ դրանց ապրանքաշրջանառությունը կազմել է 38.3%:

Բնակչությանը մատուցված ծառայությունների ընդհանուր ծավալի միայն 34.7% են ապահովել ձեռնարկությունների ընդհանուր թվի 77.6% կազմող ՓՄՁ-ները:

Բնակչությանը մատուցված կենցաղային ծառայությունների ընդհանուր ծավալի 92.7% ապահովել են կազմակերպությունների ընդհանուր թվի 99% կազմող ՓՄՁ-ները:

Բեռնափոխադրումների ծավալների կառուցվածքում ՓՄՁ-ների բաժնեմասը կազմում է 11.9%, որն ապահովում են բեռնափոխադրող կազմակերպությունների ընդհանուր թվի 45.5% ձեռնարկությունները:

Ողևորափոխադրումների ընդհանուր ծավալի միայն 2.3% են ապահովում կազմակերպությունների ընդհանուր թվի 27% կազմող ՓՄՁ-ները:

Այսպիսով, 2002-ին ՓՄՁ-ների մասնաբաժինը ՀՆԱ-ի մեջ (առանց տրանսպորտի և գյուղատնտեսության) կազմում է մոտ 30%:

Համաձայն «Փոքր և միջին բիզնեսը Հայաստանում» երկրորդ հանրապետական համաժողովում հրատարակված տվյալների՝ Հայաստանում ներկայումս գրանցված է ավելի քան 100 հազար փոքր ձեռնարկություն, սակայն բերված տվյալների համաձայն գործող է միայն 10-ից մեկը: Դրանց ՀՆԱ-ում ունեցած բաժնեմասը կազմում է մոտ 30%, (Եվրոպական երկրներում նույն ցուցանիշը կազմում է ավելի քան 50%): Չարգացած երկրներում 1000 շնչին բաժին է ընկնում 45-50 փոքր ձեռնարկություն, իսկ Հայաստանում՝ 3.5: Նույնիսկ տնտեսության այն ոլորտներում, ուր ՓՄՁ-ները կազմում են կազմակերպությունների ընդհանուր թվի գերակշռող մասը, արտադրանքի ծավալը անհամեմատ փոքր է (բացառություն են կազմում միայն հանրային սնունդն ու կենցաղային ծառայությունները): Ուստի մեզանում Փոքր և Միջին ձեռնարկատիրությունը հեռու է շուկայական տնտեսության համար բնորոշ մակարդակից:

Ո՞րն է ՓՄՁ-ների թվի և տնտեսության մեջ դրանց ունեցած ներդրման միջև անհամապատասխանության պատճառը:

3. ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ԵՎ ՓՄՁ ՆԵՐՔԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ ԿՅԱՆՔԻ ԿՈՉԵԼՈՒ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

«Փոքր և Միջին բիզնեսի շահույթի հարկման համակարգի բարեփոխումներ» ծրագրի շրջանակներում գործարար միավորումների և գործարարների հետ կլոր սեղանի շուրջ ունեցած քննարկումների արդյունքում մասնակիցները մատնանշել են մասնավոր ձեռնարկատիրության զարգացումը խոչընդոտող հիմնախնդիրների հետևյալ խմբերը.

Խոշոր բիզնեսի հարկային բեռը ծանրանում է ՓՄՁ-ների ուսերին.

- Օրենքի առաջ տնտեսվարող սուբյեկտների անհավասարության պատճառով խոշոր հարկատուները դուրս են մնում հարկային դաշտից: Գերխնդիր է խոշոր հարկատուներին հարկային դաշտ բերելը:
- Տնտեսական զարգացման առումով խիստ կարևոր տեղական խոշոր բիզնեսի տեղերում չհարկելը խանգարում է մարզային ՓՄՁ-ների զարգացմանը:

Հարկման դրույքաչափերը անհիմն մեծ են.

- Հարկման տարածքային գոտիականացման համակարգի բացակայությունը խոչընդոտում է ՀՀ տարածքում գործող տնտեսվարող սուբյեկտների համար հավասար պայմանների ստեղծմանը

- Շահութահարկի դրույքաչափը գերազանցում է տնտեսապես արդարացված սահմանը: Այն չպետք է գերազանցի 15%:
- Արդարացված չէ պարզեցված հարկի դրույքաչափը: Նպատակահարմար է սահմանել առևտրի բնագավառում 1.5-2% և արտադրության մեջ 3.5-4%:
- Պարզեցված հարկի մասին օրենքում 50 մլն-ի սահմանված շեմն անցնելու դեպքում հարկը կրկնապատվում է, որն էլ դրդում է եկամտի թաքցմանը:
- Գործունեության բնույթի բերմամբ պարզեցված հարկից դուրս աշխատող ձեռնարկությունները անհամեմատ վատ պայմաններում են գտնվում:
- Արդարացված չէ պարզեցված հարկ վճարող համարվելու համար հայտարարագիր ներկայացնելու ժամկետի սահմանափակումը (05.06.00թ. Պարզեցված հարկի մասին օրենք, հոդված 5, 2-րդ կետ):

Բացակայում են ընդհանուր գործարար միջավայրի ձևավորման համար անհրաժեշտ պայմանները.

- Մեծ պորբլեմ է կատարված գնումները հիմնավորող փաստաթղթերի հարցը: 26.12.2000թ-ից հարկվող շահույթը որոշելիս չի թույլատրվում համախառն եկամուտը նվազեցնել կատարված և փաստաթղթերով չհիմնավորված ծախսերի մասով:
- ԱԱՀ-ի վճարման առումով համակարգված չեն պարզեցված հարկով աշխատող կազմակերպությունների տնտեսական հարաբերությունները շահութահարկ վճարողների հետ:

Հարկային վարչարարության մեջ թույլ են տրվում գործարարության ծավալմանը խոչընդոտող չարաշահումներ.

- Կանխավճարի ամենամսյա պարտադրական գանձումը բերում է շրջանառությունից գումարներ օտարման (30.09.1997թ. Շահութահարկի մասին օրենք, հոդված 47):
- Մեծ անհանգստություն և դժգոհություն է առաջացնում ստուգող մարմինների ստուգումների կազմակերպման և անցկացման մասին օրենքով նախատեսված կարգի և ժամկետների հաճախակի խախտումների արատավոր պրակտիկան:

Զգալի է նաև իրավական իրազեկության և արդի հարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության պակասը:

Ամփոփելով կարելի է եզրակացնել, որ ներկայումս նկատվող Փոքր և Միջին ձեռնարկատիրության որոշակի զարգացումը տեղի ունի ոչ թե շնորհիվ այլ ի հեճուկս առկա պայմանների: Այնինչ, անհրաժեշտ է խթանել ՓՄՁ-ների թվի իրական աճը՝ ընդ որում, լուրջ ֆինանսական ակտիվների տեր, նորմալ գործող ձեռնարկությունների, որոնց կարևորագույն խնդիրն է լինելու ոչ թե բյուջեն լցնելը, այլ նոր աշխատատեղերի ստեղծումը, բնակչության գործազրկության և աղքատության կրճատումն ու եկամտի աճը:

Տնտեսության որևէ ոլորտում արագ ու նկատելի արդյունք ստանալու եղանակներից է համապատասխան հարկային արտոնությունների տրամադրումը՝ հարկման ռեժիմի մեղմացման, թե «հարկային արձակուրդի» ձևով: Ուստի խնդիր է ծագում մշակել և կիրառել հարկային արտոնությունների այնպիսի մի համակարգ, որը կնպաստի նորաստեղծ ՓՄՁ-ների կայացմանը տնտեսական գործունեության սկզբնական շրջանում և կխթանի արդեն գործողների աճն ու զարգացումը, կշահագրգռի օրինական եղանակով աշխատելու մեջ: Արդյունքում նոր աշխատատեղերի ստեղծման շնորհիվ գոյացած եկամտահարկն է, որ մեղմացնելով սոցիալական լարվածությունը, կծածկի արտոնությունների պատճառով առաջացած պետբյուջեի եկամուտների նվազումը:

Փորձենք հիմնավորել այս դրույթը:

«ՀՀ Սոցիալ-Տնտեսական Վիճակը» տեղեկատվական զեկույցի համաձայն հարկային եկամուտների մեջ մեզ հետաքրքրող հարկատեսակների վերաբերյալ բերված տվյալները հետրյալն են.

Հարկատեսակը	2001 թ.		2002 թ.	
	մլն դրամ	%	մլն դրամ	%
Հարկային եկամուտները	154913,60	100,00	185437,50	100,00
ԱԱՀ	78326,40	50,56	95006,10	51,23
Շահութահարկ	15707,40	10,14	17428,80	9,40
Եկամտահարկ	11016,80	7,11	12478,40	6,73
Հաստատագրված վճարներ	4431,10	2,86	6365,40	3,43
Պարզեցված հարկ	2026,50	1,31	3652,90	1,97

Հաշվապահների և Աուդիտորների Սոցիալիստիկ տվյալների համաձայն $17.4 \cdot 10^9$ դրամ շահութահարկի ընդհանուր գումարից $12 \cdot 10^9$ (70%)-ը պետական ձեռնարկությունների բաժնեմասն է, իսկ մնացած 30% հիմնականում խոշոր մասնավոր ձեռնարկություններինն է: ՓՄՁ-ների համար նախատեսված պարզեցված հարկի և հաստատագրված վճարների մասը կազմում է բյուջեի մուտքերի միայն մոտ 5%:

Հարկային եկամուտների կառուցվածքի դինամիկայի վերլուծությունը վկայում է, որ 2002-ին հարկային եկամուտների մեջ տեղի է ունեցել շահութահարկի և եկամտահարկի բաժնեմասի անկում, համապատասխանաբար մոտ 0.7% և 0.4% չափով, փոխարենը 0.6% չափով աճել է պարզեցված հարկի բաժնեմասը: Արդյո՞ք դա հետեվանք չէ այն բանի, որ փոքր և միջին ձեռնարկությունները ձգտելով դեպի պարզեցված հարկ, թաքցնում են իրական շրջանառության ծավալը, հետևաբար նաև վճարվող աշխատավարձի որոշակի մասը:

2002-ին միջին անվանական աշխատավարձը կազմել է 26444 դրամ: Այդ գումարից վճարվելիք միջին տարեկան եկամտահարկը կազմում է 6384 դրամ:

Մասնավոր հատվածում զբաղվածների թիվը կազմել է զբաղված բնակչության 76.9%:

Ուստի մասնավոր հատվածում վճարված եկամտահարկի գումարը 2002-ին կազմել է 9595.9 մլն դրամ:

Փոքր և Միջին Ձեռնարկատիրության Չարգացման Ազգային Կենտրոնի տվյալների համաձայն 2002-ին ստեղծված ՓՄՁ-ների թիվը 8000 է, և ՓՄՁ-ների հաշվին ստեղծված նոր աշխատատեղերի թիվը՝ 19 000: Եթե ենթադրենք, որ օրենսդրական փոփոխությունների արդյունքում նոր ստեղծվող ՓՄՁ-ների թիվը նախորդ տարվա համեմատ կաճի մոտ 50% և կկազմի 12000, ապա վիճակագրական տվյալների համաձայն դրանց հաշվին ստեղծված նոր աշխատատեղերի թիվը կկազմի մոտ 30000:

Արդյունքում ՀՀ-ում 2002-ի միջին անվանական աշխատավարձի չափի հիման վրա հաշվարկված վճարվելիք եկամտահարկի գումարը կավելանա մոտ 191.5 մլն դրամով, ինչը կազմում է 2002-ին վճարված եկամտահարկի մոտ 1.5%, մասնավոր հատվածի շահութահարկի 3.6%, կամ պարզեցված հարկի և հաստատագրված վճարների ընդհանուր գումարի 1.9%:

Փոքր և Միջին ձեռնարկատիրության ներքին ռեսուրսները կյանքի կոչելու համար անհրաժեշտ է ստեղծել ներկայումս առկա պայմաններից տարբեր այնպիսի պայմաններ, այսպիսիք, որոնք կխթանեն փոքր և միջին առևտրային կազմակերպությունների զարգացումը, ինչը որպես հետևանք կրերի պետական բյուջեի մուտքերի աճին: Հարկային

բեռի կրճատումը և հարկման համակարգի, հաշվառման և հաշվետվության ձևերի պարզեցումը ՓՄՁ զարգացմանը ուղղված պետական քաղաքականության իրականացման ճանապարհին առաջին քայլերը պետք է դառնան: Հարկային համակարգը պետք է լինի պարզ, արդարացի և կայուն, իսկ կիրառումը՝ թափանցիկ: Ընդ որում, դրույքաչափը պետք է լինի հիմնավորված և չափավոր, այնպիսին որ թույլ տա իրականացնել կապիտալի ընդլայնված վերարտադրություն, հատկապես, նյութական արտադրության ոլորտում:

Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումը խթանող գործոններից են.

- իրավական բարենպաստ դաշտի ձևավորումը.
- բարենպաստ ֆինանսական և ներդրումային քաղաքականությունը.
- պետական երաշխիքների տրամադրումը.
- ՓՄՁ-ների զարգացմանը աջակցող ենթակառուցվածքների ձևավորումը
- տեղեկատվական և խորհրդատվական օժանդակությունը.
- արտաքին տնտեսական կապերի հաստատմանը ուղղված գործունեության խթանումը.
- նորարարական գործունեության և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանը ուղղված աջակցությունը.
- բարենպաստ հարկային քաղաքականության ձևավորումը.
- կադրերի պատրաստումն ու վերապատրաստումը.
- վիճակագրական հաշվետվությունների և հաշվապահական հաշվառման պարզեցված համակարգերի մշակումը:

Մեր առաջարկությունների հիմնական ուղղվածությունը հետևյալն է.

1. Բոլոր ձեռնարկություններն աշխատեն մեկ ընդհանուր հարկային դաշտում:
2. ՓՄՁ-ների համար սահմանվեն որոշակի արտոնություններ:

Օրինակ՝ նոր ստեղծվողներին տրվի հարկային արձակուրդ:
 իսկ գործողների համար.

1. տարեկան շրջանառության որոշակի մասով շահութահարկը նվազեցվի,
2. շահութահարկի գումարը հաշվարկվի ռեգրեսիվ կարգով.

Տարեկան շրջանառությունը չի գերազանցել xxx միլիոն դրամը	Հարկվող շահույթի xx տոկոսը
Տարեկան շրջանառությունը գերազանցել է xxx միլիոն դրամը	Հարկվող շահույթի xx-y տոկոսը

Ըստ քննարկումների ընթացքում կատարված հարցման արդյունքների ՓՄՁ-ների հարկման համակարգի առաջարկվող բարեփոխումների կողմ են արտահայտվել հարցման մասնակիցների 76%:

ՀՀ հարկային օրենսդրության մեջ կատարվելիք փոփոխությունները պետք է խթան հանդիսանան տնտեսության զարգացմանը և լինեն իրագործելի իրական կյանքում:

Գերփոքր, փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման համար առաջնահերթ կարևորությունն այս ոլորտում պետք է լինի պետական քաղաքականության ճիշտ իրականացումը, որի շնորհիվ կբացվեն նոր աշխատատեղեր և էլ ավելի կբարելավվի մեր ժողովրդի սոցիալ – տնտեսական վիճակը:

Այս ամենը հաշվի առնելով Փոքր և Միջին Բիզնեսի Հիմնադրամը հանդես է գալիս փոքր և միջին ձեռնարկատիրության հարկման համակարգում փոփոխություն կատարելու մասին հետևյալ առաջարկություններով:

4. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Շահութահարկի մասին օրենքում առաջադրվող փոփոխությունները

ԳԼՈՒԽ IV. ՀԱՄԱԽԱՌՆ ԵԿԱՄՏԻ ՆՎԱԶԵՑՈՒՄՆԵՐԸ

Առաջարկություն 1. Օրենքի 13 հոդվածը լրացնել թիվ 5 կետով, հետևյալ խմբագրությամբ.

Հոդված 13. **Հիմնական միջոցների վրա կատարված ծախսերը**

1.
2.
3.
4.

5. Գերփոքր և փոքր ձեռնարկատիրության սուբյեկտ հանդիսացող առևտրային կազմակերպության շահութահարկի գումարը նվազեցվում է 50 տոկոսով, եթե սույն օրենքի 46 հոդվածի 1-ին կետում նշված ժամկետում առնվազն շահութահարկի գումարի չափով կատարվել է նորարական գործունեություն և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրում՝ նյութական արտադրության ճյուղերում:

Առաջարկություն 2. Օրենքի 19 հոդվածը լրացնել թիվ 2 կետով, հետևյալ խմբագրությամբ.

Հոդված 19. **Փաստաթղթերով չհիմնավորված ծախսերը**

1. _

2. Գերփոքր, փոքր ձեռնարկատիրության սուբյեկտ հանդիսացող առևտրային կազմակերպությունների հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը բացի 1-ին կետում նշված ծախսերից, թույլատրվում է նվազեցնել մինչև 500.000 դրամ կազմող՝ կատարված և փաստաթղթերով չհիմնավորված ծախսերի չափով, եթե տարեկան համախառն եկամուտը նախորդ տարվա համեմատ աճել է 20 տոկոսով:

Միջին ձեռնարկատիրության սուբյեկտ հանդիսացող առևտրային կազմակերպությունների հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը բացի 1-ին կետում նշված ծախսերից համախառն եկամուտը թույլատրվում է նվազեցնել մինչև 1 մլն. դրամ կազմող՝ կատարված և փաստաթղթերով չհիմնավորված ծախսերի չափով, եթե տարեկան համախառն եկամուտը նախորդ տարվա համեմատ աճել է 15 տոկոսով:

Սույն օրենքի իմաստով գերփոքր, փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտ են համարվում «Փոքր և Միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» 05.12.2000 թ. ՀՀ օրենքով սահմանված առևտրային կազմակերպությունները:

ԳԼՈՒԽ VI. ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Առաջարկություն 3. Օրենքը լրացնել 39.2 հոդվածով հետևյալ խմբագրությամբ.

Հոդված 39.2. **Գերփոքր, Փոքր և Միջին Ձեռնարկատիրության սուբյեկտների արտոնությունները**

1. Նոր ստեղծված գերփոքր և փոքր ձեռնարկատիրության սուբյեկտ հանդիսացող առևտրային կազմակերպությունների շահութահարկի գումարը՝ պետական գրանցում ստանալու պահից երկու օրացուցային տարվա ընթացքում նվազեցվում է 100 տոկոսով:

2. Գերփոքր ձեռնարկատիրության սուբյեկտ հանդիսացող առևտրային կազմակերպությունների շահութահարկի գումարը գործունեության 3-րդ տարում փոքր ձեռնարկատիրության սուբյեկտ դառնալու դեպքում ևս մեկ օրացուցային տարվա ընթացքում նվազեցվում է 50 տոկոսով:

3. Փոքր ձեռնարկատիրության սուբյեկտ հանդիսացող առևտրային կազմակերպությունների շահութահարկի գումարը գործունեության 3-րդ տարում միջին ձեռնարկատիրության սուբյեկտ դառնալու դեպքում ևս մեկ օրացուցային տարվա ընթացքում նվազեցվում է 30 տոկոսով:

4. Նոր ստեղծված միջին ձեռնարկատիրության սուբյեկտ հանդիսացող առևտրային կազմակերպությունների շահութահարկի գումարը՝ պետական գրանցում ստանալու պահից երկու օրացուցային տարվա ընթացքում նվազեցվում է 50 տոկոսով:

5. Սահմանված արտոնություններից օգտվող գերփոքր, փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտ հանդիսացող առևտրային կազմակերպությունները մասնակիցների նախաձեռնությամբ լուծարվելու դեպքում, ամբողջությամբ վճարում են նախորդ տարիների ընթացքում հարկային արձակուրդից և արտոնություններից օգտվելու հետևանքով պակաս վճարված շահութահարկի ողջ գումարը:

6. (Տարբերակ 1) Բացառությամբ սույն հոդվածի 1-ին և 4-րդ կետերում նշված դեպքերի, տարեկան 150 մլն. և ավել շրջանառություն ունեցող գերփոքր, փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտ հանդիսացող առևտրային կազմակերպության շահութահարկի գումարը տարվա իրական շրջանառության 100 մլն դրամ մասի չափով նվազեցվում է 50 տոկոսով:

(Տարբերակ 2) Բացառությամբ սույն հոդվածի 1-ին և 4-րդ կետերում նշված դեպքերի, գերփոքր, փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտ հանդիսացող առևտրային կազմակերպության շահութահարկի գումարը հաշվարկվում է հետևյալ դրույթաչափերով.

Տարեկան շրջանառությունը չի գերազանցել 150 մլն դրամը	հարկվող շահույթի 25 տոկոս
Տարեկան շրջանառությունը գերազանցել է 150 մլն դրամը	հարկվող շահույթի 10 տոկոս

ԳԼՈՒԽ VIII. ՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Առաջարկություն 4. Օրենքի 47 հոդվածի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Հոդված 47. **Ռեզիդենտների շահութահարկի կանխավճարները**

1. _

2. Կանխավճարների մուծումները կատարվում են եռամսյակին հաջորդող ամսվա 1-ին, նախորդ տարվա շահութահարկի գումարի մեկ հինգերորդի չափով, իսկ եթե դա համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվանից ոչ ուշ: (Մնացածը ընթերցել նույնությամբ:)

Նշված փոփոխությունները հնարավորություն կտան այդ ժամանակահատվածում կազմակերպություններին իրենց միջոցներն ուղղել դեպի կոնկրետ գործունեության ոլորտ, ինչը կրերի ընդհանուր հարկվող շահույթի մեծացմանը, տնտեսության զարգացմանը և բյուջեի մուտքերի ավելացմանը:

Առաջարկություն 5. Օրենքի 47 հոդվածի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

3.

4. Այն հարկատուն, որը նախորդ տարում հարկվող շահույթ չի ունեցել կամ շահութահարկի գումարը չի գերազանցել 800.000 դրամը, կարող է շահութահարկի հաշվարկը ներկայացնելուց հետո շահութահարկի կանխավճարներ չկատարել:

ՀՀ մարզերի տնտեսական զարգացմանը նպաստելու առումով առաջարկում ենք մշակել և կիրառել հարկման տարածքային գոտիականացման սկզբունքը:

Որպես ձեռնարկատիրության սովորաբարի դեմ պայքարի միջոց ներկայացնում ենք հետևյալ առաջարկությունները.

1. Առևտրային կազմակերպությունները այլ առևտրային կազմակերպություններից հիմնավորող փաստաթղթերով ապրանքներ ձեռք բերելու դեպքում, մինչև եռամսյակին հաջորդող ամսվա 1-ը ձեռք բերման փաստաթղթերը կառավարության կողմից լիազորված համապատասխան մարմնին ներկայացնելու դեպքում 30 օրյա ժամկետում ետ են ստանում հիմնավորող փաստաթղթերով ձեռք բերված ապրանքների գնի 5 տոկոսը:
2. Յուրաքանչյուր ՀՀ քաղաքացի, որն առևտրային կազմակերպություններից ապրանքներ գնելիս կպահանջի ՀԳՄ-ի կտրոնը, մինչև եռամսյակին հաջորդող ամսվա 1-ը համապատասխան մարմնին այն ներկայացնելու դեպքում 30 օրյա ժամկետում ետ կստանա գնված ապրանքի գնի 5 տոկոսը:

Այսպիսով, ինքը սպառողը շահագրգռված կլինի պահանջելու ՀԳՄ-ի կտրոնը կամ օրենքով սահմանված այլ հիմնավորող փաստաթուղթը, ավտոմատ կերպով վերահսկելով մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների իրացման իրական շրջանառության ծավալը, հետևաբար նաև եկամուտը/շահույթը/:

